ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մայիսի 2022թ. N 131-Ա

«ՋԵՐՄՈՒԿ ՀՈԹԵԼ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՄԱՆ ՄԵՋ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 16.1-ին կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «ժե» կետի, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի N 5-Ն որոշման, հիմք ընդունելով «Ջերմուկ հոթել» ՍՊ ընկերության տնօրեն Կարեն Մուրադյանի դիմում-հայտը (մտից՝ N 5, 2022 թվականի հունվարի 4) **ո ր ո շ ու մ ե մ՝**

1. «Ջերմուկ հոթել» ՍՊ ընկերությանը տալ 2022 թվականի ընթացքում Ջերմուկ համայնքի անվանումը ֆիրմային անվանման մեջ օգտագործելու թույլտվություն (Թույլտվություն N 54):

2. «Ջերմուկ հոթել» ՍՊ ընկերությունը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031716 հաշվեհամարին վճարել տարեկան 75 000 (յոթանասունհինգ հազար) դրամ տեղական տուրք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Ջերմուկ հոթել» ՍՊ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 մայիսի 31
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մայիսի 2022թ. N 132-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՄԱՐԻՆԵ ՍՈՒԳԻԿՅԱՆԻՆ 2022ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍ-ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի N 5-Ն որոշման, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Մարինե Սուգիկյանի հայտը (մտից՝ N 734, 2022 թվականի մայիսի 11) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Մարինե Սուգիկյանին 2022 թվականի մայիս-հոկտեմբեր ամիսների ընթացքում տալ Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցում գտնվող խանութում ոգելից, ալկոհոլային խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 55):

2. Մարինե Սուգիկյանին պարտավորեցնել Ջերմուկի համայնքապետարանի 900365031351 և 900365031336 հաշվեհամարներին վճարելու տեղական տուրք՝ 7 500-ական (յոթ հազար հինգ հարյուրական) դրամ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մարինե Սուգիկյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և ուժի մեջ է մինչև ս/թ նոյեմբերի 1-ը:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 մայիսի 31
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 հունիսի 2022թ. N 133-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ««ՋԱՏԻԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՆՈՒՀ ԵՎ «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի « Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգը հաստատելու մասին» N 02-Ն հրամանի հավելվածի 84-րդ կետով՝ հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչներ Գայանե Կարապետյանի և Գարիկ Սեդրակյանի դիմումները՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի ««Ջատիկ» մանկապարտեզ» նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Գայանե Կարապետի Կարապետյանին. պաշտոնավարման սկիզբը՝ սույն թվականի հունիսի 6–ը:

2. Սույն որոշման 1-ին կետի հիմքով պայմանավորված՝ հունիսի 6-ից ««Ջատիկ» մանկապարտեզ» նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության մեթոդիստ Գայանե Առաքելյանին ազատել տնօրենի պարտականությունների կատարումից:

3. Ջերմուկ համայնքի «Համայնքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Գարիկ Նորիկի Սեդրակյանին. պաշտոնավարման սկիզբը՝ սույն թվականի հունիսի 3–ը:

4. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Գ. Թադևոսյանին՝ ապահովել սույն որոշման մեջ նշված ՀՈԱԿ–ների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթների նախապատրաստման և անցկացման գործընթացները:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 հունիսի 2
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 հունիսի 2022 թ. N 134-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՇԱՌԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի N 5-Ն որոշման, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Շառլ Մաթևոսյանի հայտը (մտից՝ N 871, 2022 թվականի հունիսի 3) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Շառլ Մաթևոսյանին 2022 թվականի հունիս-դեկտեմբեր ամիսների ընթացքում տալ Ջերմուկ քաղաքի Մյասնիկյան փողոցում գտնվող խանութում ոգելից, ալկոհոլային խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 60):

2. Շառլ Մաթևոսյանին պարտավորեցնել Ջերմուկի համայնքապետարանի 900365031351 և 900365031336 հաշվեհամարներին վճարելու տեղական տուրք՝ 7 500-ական (յոթ հազար հինգ հարյուրական) դրամ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Շառլ Մաթևոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և ուժի մեջ է սույն որոշման 2-րդ կետում նշված տեղական տուրքը վճարված լինելու հանգամանքով պայմանավորված:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հունիսի 3
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 հունիսի 2022թ. N 135-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍԻ N 12/68 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 7-րդ հոդվածի 8-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման, հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Շավարշ Մանվելի Դանիելյանի դիմումները (մտից N 164՝ 26.01.2021 թ. և N 786՝ 19.05.2022 թ.)**ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2022 թվականի մայիսի 16-ի N 16052022-10-0009 վկայական) Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի N 12/68 հասցեում գտնվող 25,18 քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակը (արտաքին մակերեսը՝ 34,35 քմ) և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 24,35 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Ջերմուկ քաղաքի բնակիչ Շավարշ Մանվելի Դանիելյանին:
2. Ընդունել ի գիտություն, որ՝
   1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.
   2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.
   3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.
   1) ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1100 (հազար հարյուր) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.11).
   2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 810 (ութ հարյուր տաս) դրամ:

4. Շավարշ Մանվելի Դանիելյանը պարտավոր է վճարել՝

1) համայնքապետարանի 900365031278 հաշվեհամարին՝ 37800 (երեսունյոթ հազար ութ հարյուր) դրամ՝ ավտոտնակի գինը,

2) համայնքապետարանի 900365031625 հաշվեհամարին՝27850 (քսանյոթ հազար ութ հարյուր հիսուն) դրամ՝ հողամասի գինը.

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Շավարշ Մանվելի Դանիելյանը կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Շավարշ Մանվելի Դանիելյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 հունիսի 6
Ջերմուկ